ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է Հովսեփ Էմինը ճանապարհվել Պետերբուրգ և Ռուսաստանի վարչապետին ներկայացրել Հայաստանի ազատագրության իր ծրագիրը:

1) 1762 թ.
2) 1761 թ.
3) 1760 թ.
4) 1759 թ.

2 Անգլիացի գեներալ Դևին և Դրոն ե՞րբ են ստորագրել Շարուր–Նախիջևանը Հայաստանի Հանրապետությանը թողնելու մասին հրամանը:

1) 1919 թ. փետրվարին
2) 1920 թ. ապրիլին
3) 1919 թ. մայիսին
4) 1919 թ. ապրիլին

3 Հայոց արքա Արտավազդ II-ը ե՞րբ է մահապատժի ենթարկվել:

1) Ք. ա. 33 թ.
2) Ք. ա. 32 թ.
3) Ք. ա. 30 թ.
4) Ք. ա. 31 թ.

4 Վահան Ամատունին ո՞ր թվականին է Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրա եկեղեցի կառուցել:

1) 443 թ.
2) 444 թ.
3) 445 թ.
4) 442 թ.

5 Սայքսը և Պիկոն ե՞րբ են Սազոնովին հանձնել Օսմանյան կայսրության տիրույթների բաժանման վերաբերյալ համաձայնության նախնական տարբերակը:

1) 1915 թ. դեկտեմբերի 16–ին
2) 1916 թ. մայիսի 16–ին
3) 1916 թ. մարտի 9–ին
4) 1916 թ. մարտի 16–ին

6 ԽՍՀՄ ղեկավարության կողմից ո՞ր օրը նշանակվեց Ինքնիշխան Հանրապետությունների Միություն ստեղծելու մասին պայմանագրի հանդիսավոր ստորագրումը:

1) 1990 թ. հուլիսի 31-ին
2) 1991 թ. օգոստոսի 20-ին
3) 1991 թ. ապրիլի 22-ին
4) 1991 թ. մարտի 17-ին

7 **Ասորեստանյան արձանագրություններում ե՞րբ է առաջին անգամ հիշատակվել «Նաիրի» երկրանունը։**

1) Ք. ա. XII դարի առաջին կեսին
2) Ք. ա. XIII դարի երկրորդ կեսին
3) Ք. ա. XII դարի երկրորդ կեսին
4) Ք. ա. XIII դարի առաջին կեսին

8 **Ո՞ր թվականին է Կիլիկիայի հայոց գահը Հեթումյաններից անցել Նղրեցիներին։**

1) 1344 թ.
2) 1345 թ.
3) 1362 թ.
4) 1342 թ.

9 **Ո՞վ է ընտրվել Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ։**

1) Նիկոլ Դումանը
2) Սարգիս Մեհրաբյանը
3) Սիմոն Զավարյանը
4) Մկրտիչ Խրիմյանը

10 **Ըստ Պատմահոր գրածի՝ ո՞ւմ էր վստահել Արտաշես Բարեպաշտը հայոց զորքի հյուսիսային մասը։**

1) Սմբատին
2) Վրույրին
3) Զարեհին
4) Տիրանին

11 **Թվարկվածներից ո՞րն է Աբգար դպիր Թոխաթեցին տպագրել Վենետիկում։**

1) «Խառնայփնթուր տումարի. գեղեցիկ և պիտանի»
2) «Ս. Ժամագիրք-պատարագամատոյց»
3) «Տօնացոյց»
4) «Տաղարան»

12 **Ո՞վ էր հայոց իշխանն ու սպարապետը 748–750 թթ. ապստամբության սկզբին։**

1) Աշոտ Բագրատունին
2) Գրիգոր Մամիկոնյանը
3) Սմբատ Բագրատունին
4) Մուշեղ Մամիկոնյանը

13 **Ո՞վ է «Բազմաչափ օբյեկտ» կտավի հեղինակը։**

1) Փարավոն Միրզոյանը
2) Ռուդոլֆ Խաչատրյանը
3) Սարգիս Մուրադյանը
4) Մինաս Ավետիսյանը

14 **Ըստ իր զորքի քանակի՝ թվարկված նախարարական տներից ո՞րը չէր մտնում հազարավորների և բյուրավորների մեջ։**

1) Սոդացի
2) Բագրատունի
3) Կադմեա
4) Բզնունի

15 **Ա. Բեկզադյանը ի՞նչ էր առաջարկել 1921 թ. հունիսի 25–27–ին Թիֆլիսում կայացած անդրկովկասյան հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի նիստում։**

1) Խորհրդային Հայաստանին միացնել Զանգեզուրը, Նախիջևանը և Ջավախքը
2) ՀՍԽՀ–ին միացնել Լեռնային Ղարաբաղը, Լոռին և Ախալքալաքի գավառը
3) ՀՍԽՀ-ին միացնել Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Ախալքալաքի գավառը
4) ՀՍԽՀ-ին միացնել Լոռին, Զանգեզուրը և Ախալցխայի գավառը

16 **XII դարում որքա՞ն բերդ և ամրոց կար Սյունիքի թագավորությունում։**

1) 40
2) 72
3) 43
4) 52

17 **Ո՞ւմ պատվին է ասվել հետևյալ խոսքը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում։**

«Մեր հոգիները ցավում են ամեն մի անմահացման դեպքում, բայց մեր սրտերը գոտեպնդվում են մեր հերոսների վարքով, մեզ հաղորդում վճռականություն ու հաստատականություն»։

1) Ռոբերտ Աբաջյանի
2) Արմենակ Ուրֆանյանի
3) Սասուն Մկրտչյանի
4) Մոնթե Մելքոնյանի

18 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը։**

«Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով..., և ուստի այստեղ բոլորը միալեզու են»։

1) Պոլիբիոսը
2) Ապպիանոսը
3) Պլուտարքոսը
4) Ստրաբոնը

19 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից ո՞րն է ճիշտ։**

1) Միջագետքի հյուսիսային, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան, Փոքր Ասիայի արևելյան շրջանները և Հայկական լեռնաշխարհն ընդգրկող տարածքը հայտնի է «հնդեվրոպական հայրենիք» անունով։
2) Հայկազուն նահապետներից Արամանյակի անունից առաջացել է Հայաստանի Արմավիր մայրաքաղաքի անվանումը։
3) Հայ պատմիչների վկայած՝ հայկական նախամաշտոցյան այբուբենը գիտության մեջ պայմանականորեն ստացել է «դանիելյան նշանագրեր» անվանումը։
4) Զրադաշտական կրոնի սպասավորները կոչվում էին քուրմ։

20 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից ո՞ր երկուսն են ճիշտ։**

ա. Առաջին աշխարհամարտի ժամանակ քեմալականների կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունը մարդկությանը հայտնի է «Մեծ եղեռն» անունով։
բ. Բրեստ–Լիտովսկի բանակցությունների երկրորդ փուլում բոլշևիկների առաջ քաշած սկզբունքը հայտնի է «հաշտություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» անունով։
գ. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ունեցող երիտթուրքերի կազմակերպությունը կոչվում էր «Միություն և արդարություն»։
դ. Արևմտահայերի ազգային խորհրդի որոշումով կազմակերպվող զորամիավորը կոչվում էր նաև երկրապահ դիվիզիա։
ե. Ստեփան Զորյանի ղեկավարած մարմինը հայտնի էր «Ինքնապաշտպանության կարգադրիչ բյուրո» անունով։

1) բ, դ
2) գ, ե
3) բ, ե
4) ա, դ

21 **Թվարկվածներից որո՞նք են Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության կոլեկտիվացման գործընթացի իրական պատճառ կամ հետևանք։**

ա. Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու համար նրանցից խլեցին անձնագրերը։
բ. Ի պատասխան համատարած կոլեկտիվացման՝ Դարալագյազի շրջանի գյուղացիները ապստամբեցին, իսկ նրանց պայքարը ղեկավարում էին նախկին խմբապետներ Մարտիրոսը և Ղարդաշխանը։
գ. Պետությունը հրաժարվեց համատարած կոլեկտիվացման կարգախոսից և գյուղացիական տնտեսությունների նկատմամբ սկսեց կիրառել հարկերի նվազեցման քաղաքականություն։
դ. Դրա շնորհիվ գյուղացիության ճնշող մեծամասնությունը կամավոր անդամագրվեց կոլտնտեսություններին 1933-1935 թթ.։
ե. Կոլեկտիվացման արդյունքում Հայաստանում 1930–ական թթ. վերջին կար 1000 կոլտնտեսություն։
զ. Նյութական շահագրգռվածության լայնորեն կիրառման միջոցով կոլտնտեսություններն ապահովեցին տնտեսական վերելք։

1) ա, բ, ե
2) բ, գ, դ
3) ա, գ, դ
4) ա, ե, զ

22 **XI դ. վերջին ինչո՞ւ Արևմտյան Եվրոպայից խաչակիրները շարժվեցին դեպի Արևելք:**

1) Երուսաղեմի թագավորությանը տիրելու համար
2) Բյուզանդիային Իկոնիայի սուլթանությունից պաշտպանելու համար
3) Միջերկրական ծովի հարավային առափնյա հարուստ շրջաններին տիրելու համար
4) Ասորիքը և Պաղեստինը մահմեդականներից ազատագրելու համար

23 **Ո՞ր տարբերակում է ճիշտ ներկայացված տրված իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը:**

ա. Հովնան Խութեցու և Աշոտ ու Դավիթ Բագրատունիների գերեվարվելը
բ. «Արյան լճի» մոտ տեղի ունեցած ճակատամարտը
գ. Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու գլխավորությամբ արաբների վտարումը Տարոնից
դ. եկեղեցում թաքնված Յուսուֆի սպանությունը սասունցիների կողմից
ե. Բագարատ Բագրատունու ձերբակալվելը
զ. Բուղայի զորքի մտնելը Վիրք

1) դ, գ, ե, ա, բ, զ
2) գ, դ, ե, զ, ա, բ
3) գ, ե, դ, ա, բ, զ
4) գ, ե, ա, դ, զ, բ

24 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. Երվանդակերտ դաստակերտի կառուցումը
բ. Մագնեսիայի ճակատամարտը
գ. Փոքր Հայքի և Ծոփքի ազատվելը Սելևկյանների գերիշխանությունից և անկախ հռչակվելը
դ. Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը
ե. Մեծ Հայքի գերագույն քուրմ Երվազի սպանվելը
զ. Ապամեայի հաշտության պայմանագրի կնքումը

1) բ
2) գ
3) զ
4) դ

25 **Տարեթվերը համապատասխանեցրե՛ք իրադարձություններին և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

1. Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
2. ՀՕՄ-ի գործունեության սկիզբը
3. Միջագետքում ապաստանած հայերի երկրորդ խմբի ժամանումը Բաթում
4. ՀՕԿ-ի հիմնումը
5. Լոզանի կոնֆերանսի ավարտը

ա. 1922 թ.
բ. 1925 թ.
գ. 1923 թ.
դ. 1910 թ.
ե. 1924 թ.
զ. 1921 թ.

1) 1–ե, 2–դ, 3–գ, 4–զ, 5–ա
2) 1–ե, 2–ա, 3–բ, 4–դ, 5–գ
3) 1–զ, 2–զ, 3–ա, 4–դ, 5–ե
4) 1–ե, 2–դ, 3–ա, 4–զ, 5–գ

26 **Հայկական լեռնաշխարհի գետերը համապատասխանեցրե՛ք այն վայրերին, որոնցից դրանք սկիզբ են առնում և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

1. Ծովք լիճ
2. Ծաղկանց լեռներ
3. Խաչափայտի լեռներ
4. Սրմանց լեռներ
5. Ծաղկավետ լեռներ

ա. Արևմտյան Եփրատ
բ. Ճորոխ
գ. Արևելյան Տիգրիս
դ. Արևելյան Եփրատ
ե. Արաքս
զ. Արևմտյան Տիգրիս

1) 1–զ, 2–զ, 3–բ, 4–ե, 5-ա
2) 1–զ, 2–դ, 3–բ, 4–ե, 5-ա
3) 1–զ, 2–գ, 3–դ, 4–բ, 5-ա
4) 1–զ, 2–դ, 3–բ, 4–ե, 5-գ

27 **Տրվածներից որո՞նք 1896 թ. հունվարի 30–ին Հալեպում կնքված հաշտության պայմաններից չեն։**

ա. Զեյթունում պետք է նշանակվեր բնակչության համար ցանկալի տեղացի կառավարիչ
բ. օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ապահովել հայերի կյանքն ու գույքը
գ. զեյթունցիները կարող էին պահել պաշտպանական նվազագույն քանակի զենք
դ. հնչակյան գործիչները սեփական ծախսով պետք է հեռանային կայսրության տարածքից
ե. օսմանյան կառավարությունը պարտավորվում էր զորքերը հետ քաշել Զեյթունից
զ. տեղական պաշտոնյաները լինելու էին հայեր

1) բ, գ, ե
2) ա, գ, դ
3) բ, ե, զ
4) ա, դ, զ

28 Ո՞ր թվականին Թիգլաթպալասար III–ը կարողացավ կասեցնել դեպի Բաբելոն շարժվող Վանի թագավորության զորքերը:

1) Ք. ա. 743 թ.
2) Ք. ա. 735 թ.
3) Ք. ա. 725 թ.
4) Ք. ա. 731 թ.

29 Ե՞րբ է ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեն:

1) 1989 թ. մայիսի 25–ին
2) 1988 թ. փետրվարի 24–ին
3) 1988 թ. մայիսի 31–ին
4) 1988 թ. փետրվարի 22–ին

30 Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական զորքին փոխարինած հայկական զորքի թիվը որքա՞ն էր 1918 թ. մայիսի սկզբի դրությամբ:

1) 25-27 հազար
2) 32-33 հազար
3) 13-15 հազար
4) 42-43 հազար

31 Կ. Պոլսում 1896 թ. օգոստոսի երկրորդ կեսին տեղի ունեցած ջարդերի ժամանակ որքա՞ն հայ է զոհվել:

1) 15 000
2) 10 000
3) 20 000
4) 25 000

32 Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

«Պատերազմը, երևի, ամառը կվերջանա, և պատերազմից հետո կմեկնեմ Ամերիկա ... կմնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք ... Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան ...»:

1) Հովհաննես Քաջազնունին
2) Արմեն Գարոն
3) Ալեքսանդր Խատիսյանը
4) Սիմոն Վրացյանը

33 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը:

«Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»:

1) Նիկոլայ Տիխոնովը
2) Նիկիտա Խրուշչովը
3) Իվան Իսակովը
4) Իոսիֆ Ստալինը

34 Հայոց արքան ո՞ւմ է ներկայացրել հետևյալ պահանջը:

«... հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, է՛տ տուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, է՛տ տուր»:

1) Վաղեսին
2) Թեոդոսիոս I-ին
3) Կոստանդիոս II-ին
4) Վռամ IV-ին

35 Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ:

1. Ս. Կասյանի նախագահությամբ Թիֆլիսում բոլշևիկների կազմավորած մարմինը, որը 1920 թ. նոյեմբերի 29–ին մտավ Հայաստան և երկիրը հռչակեց «խորհրդային սոցիալիստական հանրապետություն», կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե:
2. Հայաստանի առաջին հանրապետությունում 1919-1920 թթ. քաղաքներում և գավառներում ներդրված համայնքային ինքնավարությունները կոչվում էին զեմստվոներ, որոնք նշանակովի մարմիններ էին:
3. 1978 թ. հունիսի 18–ին Հայոց ցեղասպանությունը դատապարտած մարմինը, որը կոչ արեց Թուրքիայի կառավարությանը ճանաչել այն, կոչվում էր Եվրախորհրդարան:
4. Հայաստանի խորհրդայնացումից հետո հանրապետությունում ստեղծված գործադիր իշխանության նոր մարմինները կոչվում էին ժողովրդական կոմիսարիատներ:
5. Հայ–ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը հայտնի է «Եզրափակիչ հաշտության պայմանագիր» անունով:
6. Այն կազմակերպությունը, որի նախաձեռնությամբ Նյու Յորքում 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը կայացել է Հայկական համաշխարհային կոնգրեսը, կոչվում էր Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ:

36 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ։**

1. Բագրատունյաց Հայաստանում թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված գունդը կոչվում էր արքունական։
2. Հարկատու մեկ միավոր կազմող գյուղացիական ընտանիքը կամ գերդաստանը վաղ միջնադարյան Հայաստանում կոչվում էր երդ։
3. Մամլուքներ էին կոչվում Իկոնիայի սուլթանի անձնական գվարդիայում ծառայող գնված ստրուկները։
4. Զարգացած միջնադարյան Հայաստանում քաղաքի այն մասը, որտեղ կառուցված էին նաև ազդեցիկ իշխանավորների և բարձր հոգևորականների պալատները, կոչվում էր միջնաբերդ։
5. Լոռու թագավորության հիմնադիր Դավիթը ստացավ «Անհողին» մականունը, որովհետև փախել էր երկրից և զրկվել իր հողային տարածքներից։
6. Դվին, ապա Պարտավ կենտրոնով արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորը հայտնի է Արմինիա փոխարքայություն անունով։

37 **Թվարկվածներից որո՞նք են ռուսաստանյան առաջին հեղափոխության ժամանակ տեղի ունեցած հայ–թաթարական ընդհարումների հետևանքներ։**

1. Հայերը պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին և պայքարելու սեփական իրավունքների ու գերակա նպատակների համար։
2. Հայությունը ինքնակազմակերպվեց և մարդկային ու նյութական կորուստներ չունեցավ։
3. Աճեց Հայոց եկեղեցու՝ որպես ինքնապաշտպանության ղեկավարի, հեղինակությունը։
4. Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնականության գաղափարը։
5. Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին Գ. Գոլիցինի դեմ, որը նպաստեց ազգամիջյան կռիվների դադարեցմանը։
6. Սկսեց արծարծվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը։

38 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ չեն։**

1. Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը։
2. Տիգրան III–ից հետո, Հռոմի հետ համաձայնեցնելով, գահ բարձրացավ նրա որդի Տիգրան IV–ը, և այդ պատճառով թագավորեց որպես ոչ ինքնիշխան միապետ։
3. Հայոց արքա Վաղարշ II–ի հեռատես և հմուտ քաղաքականության շնորհիվ Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեգեոնները։
4. Ք.ա. 92 թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց։
5. Տրդատ I–ի գահակալման վեցերորդ տարում՝ 76 թվականին, Մեծ Հայքի թագավորության խաղաղ կյանքն ընդհատվեց ալանների ներխուժման հետևանքով։

39 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. Պատերազմի ժամանակ հայ զինվորականներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, իսկ ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար։
2. Հայրենական մեծ պատերազմի տարիներին ցուցաբերած սխրանքների համար ԽՍՀՄ հերոսի կոչում է շնորհվել 119 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների։
3. ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը 1945 թ. մայիսի 28–ին դիմել է Ստալինին, Ռուզվելտին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու համար։
4. Ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել Կարմիր բանակի հայ զորահրամանատարներ Հայկ Բժշկյանցը, Գրիգոր Խախանյանը, Սուրեն Շահումյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը և ուրիշներ։
5. Հայկական 409–րդ դիվիզիան կռվել է Ռումինիայում, Հունգարիայում, Լեհաստանում և Չեխոսլովակիայում, կազմացրվել է 1945 թ. հունիսի 2-ին Հունգարիայում։
6. Մոսկվայի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլյայի հրամանատար Սերգեյ Բուռնազյանը։

40 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1. Նանե դիցուհու պաշտամունքի գլխավոր կենտրոնը գտնվում էր Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառի Թիլ ավանում։
2. Վանի թագավորությունում վիմագիր հաղորդումները տեղական լեզվով սկսել է կատարել Մենուա արքան, և դա շարունակել են նրա հաջորդ արքաները։
3. Հույն մատենագիր Հիպպոլիտիսը 234-235 թթ. գրված իր «Ժամանակագրություն» աշխատության մեջ հայերին հիշատակում է սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում։
4. Կրոնական վաղագույն հավատալիքները՝ բնապաշտությունը, ոգեպաշտությունը, հմայական մոգությունը, հելլենիզմի դարաշրջանում դադարեցին գոյատևել Հայաստանում։
5. Համահայկական առաջին թագավորության դիցարանում աստվածների գերագույն եռյակը կազմում էին Խալդին, Թեյշեբան և Շիվինին։
6. Տիրը դպրության աստվածն էր, համարվել է Արամազդի քարտուղարը, գրի ու գրականության, արվեստի և գիտության հովանավորը։

41 **Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը։**

1. Մ. Փորթուգալյանի վտարվելը Վանից թուրքական իշխանությունների կողմից
2. Հնչակյան կուսակցության Կարինի և Տրապիզոնի մասնաճյուղերի ստեղծումը
3. Գում Գափուի ցույցը
4. ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովի գումարումը
5. «Դրոշակ» թռուցիկ թերթի առաջին համարում ՀՅԴ հռչակագրի հրապարակումը
6. ՀՅԴ-ին Հնչակյան կուսակցության միանալու մասին համաձայնագրի կնքումը

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի մասին օրենքի հաստատումը
2. Գ. Նժդեհի ուժերի կողմից Գորիսի ազատագրումը բոլշևիկյան զորքերից
3. Ալեքսանդրապոլում թուրք-հայկական հաշտության բանակցությունների սկսվելը
4. Անկարայում ֆրանս-թուրքական զինադադարի ստորագրումը
5. ՀՀ-ի և ՌՍԴԽՀ-ի միջև համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում

43 **Իրադարձությունները համապատասխանեցրե՛ք տարեթվերին։**

Ա. 1827 թ. հոկտեմբեր
Բ. 1826 թ. հուլիս
Գ. 1827 թ. օգոստոս
Դ. 1826 թ. սեպտեմբեր
Ե. 1827 թ. սեպտեմբեր

Ա	Բ	Գ	Դ	Ե

1. Օշականի ճակատամարտը
2. ռուսական զորամասերի մուտքը Թեհրան
3. ռուսական զորքի հաղթանակը պարսից զորքի նկատմամբ Գանձակի մոտ
4. Սարդարապատի գրավումը ռուսական զորքերի կողմից
5. պարսից զորքի ներխուժումը Արցախ և Շուշիի բերդի պաշարումը
6. ռուսական զորամասերի մուտքը Թավրիզ

44 **Կատարե՛ք համապատասխանեցում:**

Ա. Սիսի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչ
Բ. Գոշավանքի նշանավոր խաչքարագործ վարպետ
Գ. Հռոմկլայի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչ
Դ. Սկևռայի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչ
Ե. Գլաձորի մանրանկարչության դպրոցի նշանավոր ներկայացուցիչ

1. Ներսես Մշեցի
2. Մոմիկ
3. Թորոս Ռոսլին
4. Պողոս
5. Գրիգոր Մլիճեցի
6. Սարգիս Պիծակ

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Արևելյան Հայաստանում Վարդ Պատրիկից հետո կառավարել են պարսիկ մարզպաններ, այնուհետև՝ հայոց իշխան Մժեժ Գնունին:
2. Հայոց եկեղեցին պահպանել է Քրիստոսի մի բնության մասին դավանաբանությունը՝ հենվելով տիեզերական առաջին չորս ժողովների վճիռների վրա:
3. Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի խաղաղ կառավարման տարիներին Հայաստանի կախումը Արաբական խալիֆայությունից ձևական բնույթ ուներ, իսկ վճարվող հարկը չնչին էր՝ 500 դահեկան:
4. 536 թ. օրենքով Արևմտյան Հայաստանի նախկին նահանգներից և հայկական հինգ ինքնուրույն իշխանություններից ստեղծված Երրորդ Հայք նահանգի կենտրոնը Մելիտինեն էր:
5. Դվինի 554 թ. ժողովում ուղենշվել է Հայոց եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը:
6. Պարսից արքա Խոսրով I–ը իր երկրում սկսված ապստամբությունը ճնշելու նպատակով ռազմական օգնություն էր խնդրել Բյուզանդիայի կայսր Մավրիկիոսից:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ Խորհրդային Հայաստանում 1960-1970-ական թթ. գործունեություն ծավալած այլախոհներին:**

ա. խորհրդային իշխանություններից պահանջում էին պահպանել օրենքները
բ. խորհրդային իշխանությունների դեմ պայքարում էին ուժային միջոցներով
գ. նպատակ ունեին վերացնելու կոմունիստների մենիշխանությունը
դ. խորհրդային իշխանություններից պահանջում էին պահպանել ԽՍՀՄ Սահմանադրությունը
ե. համախմբվել էին հայկական պատմական տարածքները վերադարձնելու գաղափարի շուրջ
զ. ընդունում էին պաշտոնական արժեքները, սակայն մերժում էին խորհրդային օրենքները
է. նպատակներից էր անկախ Հայաստանի ստեղծումը
ը. պայքարում էին մարդու իրավունքների պաշտպանության համար

1) գ, ե, է
2) բ, զ, է
3) գ, զ, ը
4) ա, դ, ե

47 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են սխալ:**

ա. Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում հայկական II–V կամավորական խմբերից ստեղծված միացյալ զորամիավորը հայտնի է «Արարատյան գունդ» անունով:
բ. Թորգոմի գլխավորությամբ 1903 թ. ամռանը Սասունին օգնության հասած ձիավոր խումբը կոչվում էր «Փոթորիկ»:
գ. Այն մարմինը, որը Արամ Մանուկյանին Թիֆլիսից Երևան էր գործուղել և նրան օժտել արտակարգ լիազորություններով, կոչվում էր Հայոց ազգային խորհուրդ:
դ. Կովկասյան ճակատում 1918 թ. գարնանը կռվող ռուսական զորամիավորումը հայտնի էր «Կարս» անունով:
ե. Միջագետքի ճակատում 1918 թ. թուրքերի դեմ կռված հայկական զորամիավորը կոչվում էր Արևելյան (Հայկական) լեգեոն:
զ. Այն մարմինը, որին Մ. Սարաֆյանը ներկայացրեց Հայաստանի ազատագրության իր կազմած ծրագիրը, կոչվում էր Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա:
է. Հայկական կամավորական ութ ջոկատներից 1916 թ. վերակազմակերպված վեց զորամիավորները կոչվում էին հայկական հրաձգային գումարտակներ:

1) ա, դ, է
2) բ, գ, է
3) ա, գ, զ
4) բ, դ, ե

48 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական հետևանքներ կամ արդյունքներ:**

ա. 1806–1812 թթ. պատերազմի արդյունքում Ռուսաստանին անցան Բեսարաբիան և Փոթին:
բ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցան Շամշադինը, Գանձակը, Լոռին, Շիրակը, Ղարաբաղը և Փամբակը:
գ. Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց նաև Ախալքալաքն ու Ախալցխան:
դ. Բեռլինի պայմանագրով Ռուսաստանը ձեռք բերեց Կարսը, Կաղզվանը, Օլթին, Ալաշկերտը:
ե. 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Ռուսաստանը տեր դարձավ մերձկասպյան տարածքներին:
զ. 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի արդյունքում ձևավորվեց նաև Տրապիզոնի մարզը:
է. 1828-1830 թթ. ընթացքում մոտ 110 հազար հայեր վերաբնակվեցին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցած տարածքներում:
ը. Փարիզի հաշտության պայմանագրով Ռուսաստանը թեև պահպանեց Ղրիմ թերակղզին, սակայն հրաժարվեց Արևմտյան Հայաստանում գրաված հողերից:

1) ա, գ, է, ը
2) բ, գ, ե, ը
3) ա, դ, ե, է
4) բ, դ, զ, է

49 **Պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են սխալ:**

ա. VII դարի կեսերի արաբական նվաճողական պատերազմների հետևանքներից էր Սասանյան տերության և Բյուզանդիայի կործանումը:

բ. Կիլիկիան վերանվաճելու համար Հովհաննես Կոմնենոս կայսրը Ռուբինյան իշխանության դեմ 1137 թ. սկսեց պատերազմ:

գ. Արճեշի ճակատամարտում հայ ապստամբներն ունեցան զգալի կորուստներ. զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և բազում այլ տոհմերից նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ երեք հազար հոգի:

դ. Սահակ Պարթև կաթողիկոսի ջանքերի շնորհիվ Շապուհ III–ը Կամսարականներին ու Ամատունիներին վերադարձրեց իրենց տոհմական տիրույթները:

ե. Վարդանանց պատերազմի շնորհիվ հայոց երկիրը պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը:

զ. Մի խումբ հայ նախարարների և փառամոլ երեց Սուրմակի բողոքի ու չարախոսության արդյունքում Արտաշեսը զրկվեց գահից, իսկ Սահակ Պարթևը՝ կաթողիկոսությունից:

է. Հայ–վրացական համագործակցության շնորհիվ սելջուկներից ազատագրվեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և հարավային հատվածները:

ը. Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառներից էին զարգացած միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնախույս ձգտումները:

1) բ, գ, զ, ը
2) ա, բ, դ, ը
3) գ, ե, զ, է
4) ա, գ, դ, է

50 **Թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության։**

ա. Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանության սկիզբը Ա. Եկարյանի ղեկավարությամբ
բ. Դիլմանի ճակատամարտը
գ. անգլո-ֆրանսիական ռազմական ուժերի կողմից Կ. Պոլիսը գրավելու նպատակով Դարդանելի գործողության իրականացման սկիզբը
դ. Մուշի հայության ինքնապաշտպանության սկիզբը Հակոբ Կոտոյանի գլխավորությամբ
ե. Արամ Մանուկյանի նշանակվելը Վանի նահանգապետ
զ. Շատախ գավառի կենտրոն Թաղի ինքնապաշտպանության սկիզբը
է. օսմանյան Թուրքիայի ներքաշվելը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ
ը. Խեչոյի և իր 150 հեծյալների մուտքը Վան
թ. Սարիղամիշի ճակատամարտի ավարտը, թուրքական զորքի ջախջախումը

1) զ
2) բ
3) ը
4) ա

51 **Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարների անունները դասավորե՛ք նրանց պաշտոնավարման ժամանակագրական հաջորդականությամբ և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

ա. Ս. Թովմասյան
բ. Ա. Խանջյան
գ. Ամատունի
դ. Յ. Զարոբյան
ե. Գ. Հարությունյան
զ. Ս. Հարությունյան
է. Կ. Դեմիրճյան

1) բ, զ, ե, ա, դ, է, զ
2) զ, բ, ա, ե, զ, դ, է
3) բ, ե, ա, գ, դ, է, զ
4) բ, զ, ե, ա, զ, դ, է

52 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը։**

ա. Գող Վասիլի իշխանության ստեղծումը
բ. Փիլարտոս Վարաժնունու իշխանության ստեղծումը
գ. Սմբատաբերդ լեռան մոտ հայ բնակչության կոտորածը
դ. թյուրք–սելջուկների առաջին արշավանքը Հայաստան
ե. թուլամորթ թագավոր Հովհաննես-Սմբատի մահը
զ. Ապլղարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի կառավարիչ
է. թյուրք–սելջուկների երրորդ արշավանքը Հայաստան
ը. Մանազկերտի ճակատամարտը
թ. Վանանդի թագավորության անկումը
ժ. Ծումբ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը

1) է
2) զ
3) թ
4) զ

53 **Կատարե՛ք համապատասխանեցում և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

Պաշտոն

1. ՀՍԽՀ արտակարգ կոմիսար Ղարաբաղում
2. Կապանում և Սիսիանում տեղի ունեցած հակախորհրդային ապստամբության ղեկավար
3. Փարիզի վեհաժողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
4. ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ
5. ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ
6. Հայաստանի խորհրդի նախագահ
7. ՀՀ զինվորական նախարար

Անուն

ա. Թևան (Ստեփանյան)
բ. Սահակ Տեր-Գաբրիելյան
գ. Ասքանազ Մռավյան
դ. Ռուբեն Տեր-Մինասյան
ե. Լևոն Կարախան
զ. Պողոս Տեր-Դավթյան
է. Ավետիք Սահակյան
ը. Ավետիս Ահարոնյան

1) 1–զ, 2–ա, 3–ը, 4–ե, 5–բ, 6–է, 7-դ
2) 1–բ, 2–դ, 3–է, 4–գ, 5–ե, 6–ը, 7-զ
3) 1–գ, 2–զ, 3–ը, 4–բ, 5–ե, 6–է, 7-դ
4) 1–գ, 2–զ, 3–ը, 4–դ, 5–բ, 6–է, 7-ե

54 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները:**

ա. Արգիշտի II–ը, թեև գահ բարձրացավ դժվարին ժամանակաշրջանում, սակայն կարողացավ զարկ տալ քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:

բ. Մենուայի առաջին քայլերից մեկն էր Հայկական Պար լեռնաշղթայի արևելյան հատվածում ամրապնդվելը, որի գրավումից հետո էլ նա հիմնում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:

գ. Ռազմական ոլորտի բարեփոխումների շնորհիվ Իշպուինին Ք. ա. 820–ական թթ. սկզբին ընդլայնեց թագավորության սահմանները Ուրմիա լճի ավազանի հարավում՝ ներառելով Արդինի–Մուսասիր երկիրը:

դ. Արգիշտի I–ի օրոք Վանի թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:

ե. Հայկական լեռնաշխարհի հարավ–արևելքում Ք. ա. VII դարի առաջին կեսին վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:

զ. Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից:

է. Ռուսա III–ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:

1) բ, դ, է
2) գ, դ, ե
3) ա, գ, է
4) բ, դ, զ

55 **Տրվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում Կիլիկյան Հայաստանի պետական կարգի բնութագրական կողմերը և առանձնահատկությունները:**

ա. Կանցլերը գլխավորում էր արքունի քարտուղարությունը և թագավորի առաջին խորհրդականն էր:

բ. Պետության կառավարման գլխավոր մարմինը արքունիքն էր, որի մեջ մտնում էին արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:

գ. Թագավորի անչափահասության դեպքում պայլը իրականացնում էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:

դ. Խնամակալության գործակալությունը ստեղծվել էր թագավորության հռչակումից հետո:

ե. Սպասալարը արքունական հեծելազորի հրամանատարն էր և սպարապետի անմիջական տեղակալը:

զ. Թագադիր գործակալությունը ստեղծվել էր Ռուբեն III-ի օրոք:

է. Սենեսկալը տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը:

1) բ, գ, ե
2) բ, դ, է
3) ա, դ, զ
4) բ, գ, է

56 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

ա. Լազարյան ճեմարանը ժամանակին եղել է Ռուսաստանյան կայսրության միակ արևելագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը։
բ. Արցախի ազատագրական ուժերը 1723 թ. թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ։
գ. Եղվարդ գյուղի մոտ 1736 թ. հունիսին տեղի ունեցած ճակատամարտում Նադիրի բանակը ծանր պարտության մատնեց օսմանցիների զորքերին։
դ. Հովհաննես Թութունջի վարդապետը մահտեսի Շահմուրատի հետ, հայկական պատվիրակության կազմում, 1683 թ. ժամանել էր Փարիզ։
ե. Հայտնի պատմաբան Լեոն պատմագրության մեջ պահպանողական ուղղության հետևորդ էր և գրել է Հայոց պատմության բոլոր շրջանների և հիմնախնդիրների մասին։
զ. Պետերբուրգում 1809 թ. ռուսերենով լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը։
է. Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի և ուրիշների գլխավորությամբ տևել է երեք ամսից ավելի, իսկ այդ ընթացքում թուրքական բանակը կորցրել է ավելի քան 20 հազար զինվոր։
ը. Կ. Պոլսում 1861 թ. Հ. Վարդովյանի գլխավորությամբ ստեղծվել է հայկական առաջին արհեստավարժ թատրոնը։

1) ա, գ, զ, ը
2) բ, գ, զ, է
3) ա, դ, զ, է
4) բ, դ, ե, ը

57 **Մեծ Հայքի Արշակունյաց գահակալների անուններին համապատասխանեցրե՛ք գահակալման տարիները և գտե՛ք ճիշտ տարբերակը։**

ա. Վաղարշ I	1. 88–110 թթ.
բ. Սանատրուկ	2. 185–198 թթ
գ. Տրդատ II	3. 198–215 թթ.
դ. Տրդատ I	4. 216–252 թթ.
ե. Վաղարշ II	5. 66–88 թթ.
զ. Բակուր Արշակունի	6. 161–163 թթ.
է. Խոսրով I	7. 117–140 թթ.
	8. 88–117 թթ.

1) ա–6, բ–5, գ–4, դ–1, ե–2, զ–7, է–3
2) ա–7, բ–1, գ–4, դ–5, ե–2, զ–6, է–3
3) ա–7, բ–1, գ–3, դ–5, ե–8, զ–6, է–2
4) ա–7, բ–1, գ–4, դ–5, ե–3, զ–6, է–2

58 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ։**

1. Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքն ընդգրկող և 1828 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Հայկական մարզ։
2. Հայկական պետականության վերականգնման այն նախագիծը, ըստ որի Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր խորհրդարանական հանրապետություն, հայտնի է «Հյուսիսային ծրագիր» անունով։
3. Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնի անվանումն էր Կովկասի փոխարքա։
4. Առաջին հայդուկները հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից նոր բռնությունների առիթ չտալու նպատակով հաճախ ներկայացել են որպես քրդեր և հանդես եկել «չելլոներ» կոչվող քրդական կառավարական ջոկատների կազմում։
5. Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից կազմված և սուլթան Համիդ II–ին հանձնված նախագիծը ստացել էր «Մայիսյան բարենորոգումների ծրագիր» անունը։
6. Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար 1912 թ. հոկտեմբերին ստեղծված համազգային նոր մարմինը կոչվում էր Ազգային պատվիրակություն։
7. Մեծ Թուրանի ստեղծման պանթուրքական ծրագրի իրագործման առաջին փուլը կոչվում էր թուրքիզմ, որը ենթադրում էր թուրքացնել Օսմանյան կայսրությունը, Կովկասի մեծ մասը և Թուրքմենստանը։
8. Ցարական Ռուսաստանի կողմից Անդրկովկասում ստեղծված և Շամախի կենտրոնով վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ։
9. Ժամանակավոր կառավարության կողմից Արևմտահայաստանի գեներալ-կոմիսարին հասցեագրված գաղտնի փաստաթուղթը կոչվում էր «Ղեկավար հրահանգներ»։

59 **Ընտրե՛ք ճիշտ պատասխանները։**

«Յոթ ազատ արվեստների» Քառյակ ենթահամակարգը ներառում էր՝

1. քերականությունը
2. աշխարհագրությունը
3. թվաբանությունը
4. աստղագիտությունը
5. ճարտասանությունը
6. երկրաչափությունը
7. աստվածաբանությունը
8. երաժշտությունը
9. տրամաբանությունը

60 **Պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ։**

1. Զելայի ճակատամարտում հռոմեական զորքի պարտությունից հետո վերականգնվեց հայկական գերիշխանությունը Ասորիքում և Միջերկրական ծովի ափերին։
2. Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո Արտաշես I–ը հաշտության պայմանագրում կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Մեծ Հայքի տարածքը։
3. Արտաշատում կնքված դաշինքի համաձայն՝ հայկական զորքերը Ք.ա. 93 թ. գրավեցին Կապադովկիան, սակայն մեկ տարի անց ստիպված եղան հեռանալու այնտեղից։
4. Խառանի ճակատամարտում պարթևական զորքերի պարտությունը նպաստեց Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզի փոփոխմանը։
5. Գավգամելայի ճակատամարտում Աքեմենյան Պարսկաստանի զորքերի պարտության հետևանքով ձևավորվեց Սելևկյան հսկայածավալ աշխարհակալությունը։
6. Երվանդ II–ը գլխավորել է Աքեմենյան տերության դեմ մի քանի սատրապների ապստամբությունը, որի անհաջողությունից հետո ապաստանել է Հունաստանում։
7. Համահայկական առաջին թագավորության անկմանը նպաստեցին նաև հյուսիսից հայտնված և երկիրն ասպատակող սկյութները։
8. Վանի թագավորությունում ստրուկների թվաքանակը հիմնականում ավելանում էր բնական ճանապարհով, ինչպես նաև պարտքի դիմաց և հանցագործների ստրկացման եղանակով։

61 **Գտե՛ք ճիշտ պատասխանները։**
Հայաստանում «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառման արդյունքում՝

1. Դրոն ազատվեց ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատարի պաշտոնից
2. երկու ամսում հայկական բանակից հեռացվեցին ավելի քան 1700 սպա և զինծառայող
3. ձերբակալվեցին ՀՀ նախկին վարչապետներ, խորհրդարանի անդամներ, իսկ զորահրամանատարներ Սեբաստացի Մուրադը և Նիկոլայ Ղորղանյանը սպանվեցին բանտում
4. բնամթերային հարկաձևը փոխարինվեց դրամական հարկաձևով
5. հայկական բանակի մոտ 500 սպաներ աքսորվեցին Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներ
6. պետությունը հրաժարվեց տնտեսական կյանքին միջամտելուց
7. տեղի ունեցավ ժողովրդական լայն զանգվածների ապստամբություն

62 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

1. XVII դ. առաջին կեսին միայն զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ և պահպանեցին իրենց ներքին ինքնուրույնությունը։
2. Մելիքները պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում ճնշել խռովարարներին, պատերազմի ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին և պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից։
3. Օսմանյան թուրքերը Կոստանդնուպոլիսը գրավելուց հինգ տարի հետո թույլատրեցին այնտեղ հիմնադրել հայոց պատրիարքություն, որի ղեկավարը հաստատվում էր սուլթանի կողմից։
4. Հայերի բռնագաղթի միջոցով որակյալ արհեստավորներ ու երկրագործներ փոխադրելով ու բնակեցնելով Իրանի ներքին շրջաններում՝ շահ Աբասը նպատակ ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը։
5. Վաղ միջնադարյան Հայաստանում ազատ և կախյալ գյուղացիները ունեին որոշ սեփականություն՝ գյուղական համայնքի հողից մասնաբաժին, տուն, գյուղատնտեսական գործիքներ, անասուններ։
6. Հայոց նախարարական համակարգում գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալն է» ենթակայության ավատատիրական սկզբունքը։
7. Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» ծառայեց հասարակական կյանքի բոլոր բնագավառները կարգավորելուն շուրջ 500 տարի։
8. Բագրատունյաց Հայաստանում փոքր գործերի դատավարությունը կատարվում էր եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու սովորութային իրավունքով։
9. Կարա–Յուսուֆի կառավարման օրոք Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում և այլ շրջաններում հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը։

63 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ։**

1. Համահայկական առաջին թագավորության մշակույթն իր բազմաբնույթ ազդեցությունն է տարածել Հայաստանից դուրս՝ հասնելով Հունաստան, Իրան, Կովկաս և այլուր։
2. Սարդուրի I–ի օրոք արհեստավարժ բանակի կազմում առանձնացվեց «արքայական գունդը»՝ հեծյալ զորամիավորներից բաղկացած ուժերը։
3. Համահայկական երկրորդ թագավորության անկումը համապատասխանում է բրոն հելլենիզմի ավարտի ժամանակաշրջանին։
4. Խորենացին վկայում է, որ հայերը ոչնչացնում են Մենոն զորավարի բանակը, իսկ նրան «խեղդամահ անում», որից հետո Ալեքսանդրը նոր զորք չի ուղարկել Հայաստան։
5. Շամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը։
6. Հռոմում ստեղծված Առաջին եռապետության անդամներն էին Մարկոս Կրասոսը, Հուլիոս Կեսարը և Գնեոս Պոմպեոսը։
7. Հայկական լեռնաշխարհում վաղագույն տիեզերագիտական գիտելիքները հայտնի են դեռևս քարի դարի վերջին փուլում փորագրված ժայռապատկերներից։

64 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. 1907 թ. Անդրանիկը հեղինակել է «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը։
2. 1857 թ. Կ. Պոլսի ուսումնական խորհրդի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Ն. Պալյանը և ուրիշներ մշակել են արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերող մի կանոնադրություն և ներկայացրել համայնքի ընդհանուր ժողովի հաստատմանը։
3. Ուսուցիչ Արսեն Կրիտյանի և զինագործ Պետրոս Հայկազունու գլխավորությամբ 1869 թ. Ալեքսանդրապոլում ստեղծվել է «Բարենպատակ ընկերություն» խմբակը։
4. 1882 թ. նոյեմբերի վերջերին թուրքական ոստիկանությունը հայտնաբերել է Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը և բանտարկել շուրջ 170 մարդու։
5. 1863 թ. մայիսի 24–ին Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատել է արևմտահայերի կանոնադրությունը։
6. Մկրտիչ Խրիմյանի շնորհիվ, ով 1867 թ. դարձել էր Կ. Պոլսի հայոց պատրիարք, Ազգային սահմանադրությունը գործադրվել է Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում։
7. 1883 թ. ապրիլին Կարինում տեղի է ունեցել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարությունը, որին անձամբ հետևել է սուլթան Աբդուլ Համիդ II–ը։
8. 1890 թ. Թավրիզում դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործական արհեստանոցը վերածվել է զենքի արտադրության կարևոր կենտրոնի։

65 **Գտե՛ք այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը։**

1. Հայոց կաթողիկոսական աթոռի փոխադրումը Հռոմկլա
2. Թորոս II–ի կողմից բյուզանդական բանակի ջախջախումը Մսիս քաղաքի մոտ
3. Անավարզայի դառնալը Ռուբինյան իշխանության մայրաքաղաք
4. Միրիոկեֆալոնի ճակատամարտը
5. Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
6. Ամբերդ ամրոցի ազատագրումը Զաքարյանների հրամանատարությամբ
7. Սալահ ադ Դինի կառավարման ավարտը
8. Լևոն II–ի և Բոհեմունդ III-ի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սիսում
9. Լևոն II–ի հանդիսավոր թագադրությունը

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը Գետաշենում
2. «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
3. Զորի Բալայանի կողմից հացադուլի հայտարարումը Մոսկվայում և Վիկտոր Համբարձումյանի ու Սոս Սարգսյանի միանալը նրան
4. երեք պետությունների ղեկավարների կողմից Բելովեժյան արգելանոց-անտառում ԽՍՀՄ-ի վերացման և ԱՊՀ-ի ստեղծման մասին հայտարարելը
5. ՀՀՇ առաջին համագումարի բացումը
6. ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը
7. ԼՂԻՄ-ում Հատուկ կառավարման կոմիտեի վերացումը

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ։**

1. Տարոն գավառում հայ ազնվականի՝ Կորբուլոնին սպանելու փորձը
2. Հռադամիզդի փախուստը Արտաշատից կնոջ հետ
3. Տիգրան VI–ին գահընկեց անելը
4. փոքրաթիվ զորաջոկատով Տրդատի հեռանալը Ատրպատական եղբոր՝ Բակուրի մոտ
5. Ներոն կայսեր գահակալման սկիզբը
6. Արտաշատի ավերումը Կորբուլոնի կողմից
7. Հռոմում կայսերական վարչակարգի հիմնումը

68 **Զբաղեցրած պաշտոնները համապատասխանեցրե՛ք անուններին:**

Ա. Անդրանիկ
Բ. Գ. Տեր-Ղազարյան
Գ. Հ. Զավրյան
Դ. Մ. Սիլիկյան
Ե. Թ. Նազարբեկյան
Զ. Դ. Բեկ-Փիրումյան
Է. Մ. Պապաջանյան

1. «Թուրքահայաստանի» գլխավոր կոմիսարի տեղակալ
2. Առանձին հայկական կորպուսի «Երևանյան զորախմբի» հրամանատար
3. Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ
4. Հայկական կորպուսի կոմիսար
5. Էրզրումի պաշտպանական շրջանի ղեկավար
6. Սարդարապատի ջոկատի հրամանատար
7. Անդրկովկասյան կոմիսարիատի կոմիսար
8. Առանձին հայկական կորպուսի հրամանատար

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Հեղինակների անունները համապատասխանեցրե՛ք մեջբերված խոսքերին:**

Ա. «…հնուց հայերեն գիր է եղել», ինչը «վկայվեց Լևոն արքայի ժամանակ, քանզի դրամ գտավ Կիլիկիայում՝ դրոշմված հայերեն գրով… Հայկազուն թագավորների» անուններով:
Բ. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
Գ. «Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այդ աշխարհը»:
Դ. «… եղավ աստվածագիտության լույսի դուռ և բազմազան բարիքների երջանիկ օրինակ»:
Ե. «…եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:
Զ. «Ո՞ւր հասանէ գիտութիւն, ուր ոչ հասանէ բնութիւն»:
Է. «Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի, քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

1. Փավստոս Բուզանդ
2. Եղիշե
3. Դավիթ Անհաղթ
4. Վարդան Արևելցի
5. Ղևոնդ
6. Մովսես Կաղանկատվացի
7. Կորյուն
8. Ասողիկ

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության երկրորդ փոփոխությունները հաստատվել են հանրաքվեի միջոցով՝ ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններից հետո։
2. ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4–ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու մասին, սակայն Մոսկվան չհաստատեց այն և հաջորդ տարի թույլատրեց նոր կաթողիկոս ընտրել։
3. Խորհրդային Հայաստանից 1949 թվականին մոտ 15 500 հայ, որպես քաղաքականապես անհուսալի, աքսորվել է հիմնականում Ալթայի երկրամաս։
4. Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի օրը Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և հանրահավաքներ. Երևանում նման զանգվածային ելույթներ եղան նաև 1980–ական թթ. վերջին։
5. Խորհրդային իշխանությունը 1920-1930-ական թթ. միջամտում էր Հայոց եկեղեցու բոլոր գործերին. արգելեց ճեմարանի վերաբացումը, 1925 թ. հատուկ որոշումով արգելեց նաև եկեղեցու կողմից Հայոց եղեռնի օրվա նշումը և այլն։
6. ԽՄԿԿ կենտկոմի 1953 թ. հուլիսի 2-ին կայացած լիագումար նիստում ձերբակալվեց ներքին գործերի նախարար Լ. Բերիան և քննվեց նրա հանցավոր գործունեության մասին հարցը։